ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> 09 2011թ. N: 293-Ա ք.Գյումրի

<<ԱԽՈՒՐԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի,56-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի<<ա>> և <<է>> ենթակետերի,<< Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1023-Ն որոշման 2-րդ կետի պահանջի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.<<Ախուրիկի բժշկական ամբուլատորիա >> փակ բաժնետիրական ընկերության 4200000 դրամ անվանական արժեքով մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժանել և փոխարկել 4200000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի արժեքը սահմանելով 1 դրամ:

2.<< Ախուրիկի բժշկական ամբուլատորիա >> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 6338376 դրամով, այն սահմանելով 10538376 դրամ, որը համապատասխանում է 10538376 հասարակ (սովորական) բաժնետոմսի՝ մեկ բաժնետոմսի արժեքը՝ 1 դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> թիվ 118 որոշմամբ

հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Ախուրիկի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10538376 դրամ, որը կազմում է 10538376 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 դրամ:

Բոլոր 10538376 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադիրին՝ Հայաստանի Հանրապետությանը:>>:

4.Հանձնարարել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ախուրիկի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Լենա Մանուկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացնել իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին, պետական գրանցում կատարելու համար:

5.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ

Ա. Գիզիրյան

Իսկականի հետ ճիշտ է